

891.995

U-43

Переплетно-корректурный  
МАСТЕРСКИИ  
Е. В. Горь-Андреев  
Тадорский

891.542-93 | У2У2У2. 2. <sup>602</sup>  
6577

У-43 | У224У2У2.

У2У2У2

31	<del>23/10/76</del>	<del>У2У2</del>	02А

~~31-23/10/76~~





Ն Ի Է Ր

# ԻՄ ՍԻՐԱՍՈՒՆ

ԱՇԱԿԵՐՑ-ԱՇԱԿԵՐՑ ՈՒՆԻՆԵՐԻՆ


— Էն խելօք-մելօք, չարածճի, ժիր ու կրակոտ աղջիկ ու տղայ բալիկներիս, որոնք վեց տարի շարունակ, զանազան դպրոցներում, սովորել են ինձ մօտ, ինձ ուրախացրել ու մխիթարել են...

Ապրեն նրանք, շատ ապրեն:

Նրանց կարօտով ուսուցիչ՝

ՅԱԿ. ԱՂԱԲԱԲ

1907 թիւ, յուլիսի 20-ին  
Թ Ի Փ Լ Ի Խ



ՆԱՆԻ  
Հ Ր Ա Ի Է Ր Ը


«Բնւի-բնւի, բնւի-բնւի,  
Իմ բազիկներ,  
Եկէք, կերէք ախորժեղի  
Ձեր հատիկներ,  
Հերիք ինչքան սառը ջրում  
Լող-լըղացիք,  
Թե թափ տարով, դուք անդադրում  
Ճրղ-ճըղացիք»:

Բազ ու բազիկ, կարմրաթաթիկ,  
Նախշուն փետուր, դիփ խատուտիկ,  
Ձլազլուխ, երկայնավիզ,  
Տափակ կտուց, բաց-կարմրամիս՝  
Տուն գնացին օրօրելով,  
Ազիզ-մազիզ շօրօրելով:

Տուն գնացին, գտան նանին,  
Տանջանք դառան նանի ջանին.  
—«Չը՛ր-ճը՛րտ, չը՛ր-ճը՛րտ, դան, դան, դան, դան,  
Բան մեր կուտն էս ո՞ր տեղ ա...»:

Նանը գնաց սիմինդ բերեց,  
Առատ-առատ գետնին փրուեց,  
Նրանք կերան լիք-լիք բերան,  
Կըշտացան ու՛ հայդէ, կորան:

Ե Ր Գ Գ Ն Ր Ն Ա Ն



Սիրուն գարնուն, դէհ, շուտ արի՛,  
Քեզ ենք սպասում մի տարի,  
Չուն-ձմեռայ էս ցրտերը՝  
Մաշեցին մեր սրտերը:

Արդէն վաղճւց քեզ են կարօտ  
Դաշտն ու այգին ու արօտ,  
Անտառներն և սար ու ձոր  
Քեզ են սպասում օրէցօր:

Երբ որ դու գաս, հետդ բերես  
Կարմիր արև ժպտերես,  
Առատ անձրև ինչքան կարաս  
Մեր ցանքսերին շատ կըտաս:

Արի գարուն, դէհ, շուտ արի,  
Արի լիքն ու բարի,  
Չուն-ձմեռայ էս ցրտերը՝  
Հալեցին մեր սրտերը:

Փ Ա Յ Լ Ե Ի Ա Ն

Ա Ք Ա Ղ Ա Ղ Ը

1



ըթին ապերը մի թաբուն (խումբ)  
հաւ ունէր: Հաւեր եմ ասում է.  
ամեն մէկը՝ մի հնդկահաւի չափ:

Նրանք բոլորը չաղութիւնից հազիւ էին տեղները շարժ-  
ւում: Ման գալիս՝ գլուխները կուչ ու ձիգ անելով, մար-  
մինն աջ ու ձախ օրօրելով էին քայլում:

Այդ հաւ մարիկներից մէկը սպիտակ էր՝ ամբիժ սպիտակ  
և պսպղում էր արծաթափայլ ձիւնի նման, միւսը կարմիր էր՝  
կաս կարմիր և փայլում էր արնագոյն որդանի նման, երրորդը  
սև էր՝ սաթ սև ու պէճպճում էր ոսկեխառը հանքի նման.  
մի ուրիշը դեղին էր՝ շէկ-դեղին, և հուրհրատում էր կրակի  
բոցի նման, մի քանիսն էլ՝ չալ ու չալտիկ, խայտաբղէտ, մի  
խօսքով՝ նրանց մէջ կային ամեն գոյնի և ճաշակի հաւեր:

Նրանք մենակ չէին ապրում: Նրանց խմբի թագ ու  
պսակն էր և ամենից նախ ու նկարն՝ ապօր Աքաղաղը:  
Ձեր տեսած աքաղաղներից չէր նա, այլ մի փահլևան, մի  
նորափեսայ թուշուն էր նա. հասակը բարձր ու համաչափ,  
վիզն երկայն ու սլուլիկ, գլխի կատարը հրեղէն լեզուներ  
բի փունջ, կուրծքը ծաղկափթիթ ու նախշուն, պոչն եր-  
բներանգ ու կեռ փետուրներից, ոտքերը կոկ ու սուր-  
սուր եղունգներով զինւած, ապա մօրսէքը... Մքանչէլի  
էր, սքանչէլի...

Նա ման էր գալիս միշտ խմբի առաջից՝ վսեմ,  
ուշադրութիւնը լարած, չորս բոլորը դիտելով: Մի կաս-

կածելի ձայն: մի տափակ թրխկոց ականջն ընկնելուն պէս՝  
 ո՛ր կըչ-կչում, թևերը թափահարում ու ծղրտում չէր,  
 մարդու ականջ էր ծակում: Կարծես ինքն էլ էր հասկա-  
 նում, որ իր խմբի փահլեանն է, հերոսը, հաւերի տէր ու  
 տիրականը: Եւ որպէս ազնւաշուք իշխանաւոր, պահան-  
 ջակոտ էլ էր, բարկացող, նոյնիսկ հրամայող:

II

**Ա**պօր նորափեսան առաւօտները շատ կանուխ էր  
 արթնանում: Թաւից ցատկում էր դուրս՝ բակն և ո՛ր  
 կտուցը բաց չէր անում ու գլուխը ճօճելով «ծնղրնղնղն»  
 կանչում, շրջակայքի քնածների հանգիստը միանգամից էր  
 խանգարում:

— Ծնղրնղն-ղնղն... կրկնում էր նա իր չորսգագա-  
 նոց կանչն, և հաւերը մէկ-մէկ ցած էին իջնում, նրա  
 շուրջը հաւաքելով, կտուցներն աջ ու ձախ գետնին էին  
 քսում ու ծկլակում վեր՝ դէպի երկինք: Այնտեղ դեռ աստ-  
 դեր տեսնելով, սուսիկ-փուսիկ փափսում էին միմանց  
 ականջին և դժգոհում:

— Վայ քան, էսքան էլ վաղ վեր կենալ կըլինի:

— Սո՛ւս, կարմրակատարը չիմանայ, թէ չէ միտդ կը  
 բըրբըրի, — անասա էին անում բոլորը:

Իրաւ, ո՞վ կը համարձակէր Փեսին բան ասել և նրա  
 քէփին դիպչել. ամենքը հլու հնազանդ էին նրան: Նա,  
 «կը՛-կը՛-կը՛-կղա՛-կը՛-կը՛-կը,» զրուցելով, հաւերին քամա-  
 կըն առած, գալիս մօտենում էր ապօր դռանն և բոլորի  
 հետ աչքերը չորս առած, սպասում էր ապօր դուրս գա-  
 լուն, որ գայ ու իրան ու իր սիրուն-միրուն հարսներին  
 կուտ տայ:

Ապէրը սովորել էր աքաղաղի բնաւորութեանը: Եր-  
 բեմն գիտամաբ, մի երկու անգամ դատարկածեռն էր  
 դուրս գալիս անից ու էլի ետ ներս մտնում: Իսկ երբ

երբորդ անգամն էլ՝ դարձեալ առանց կուտի էր երևում  
 աքաղաղի աչքին, էլ հերիք... կատարեալ կուտ...

Աքաղաղը կըչկըչալով կամ վազում էր ապօր սրունք-  
 ներից կըցկտում ու ճըմբթում, կամ ծառս էր լինում և  
 ցատկում էր դէպի նրա երեսն ու թևաթակ անելով, կրտ-  
 ցահարում և ստիպում էր, որ շուտ անի, կուտ ու շուր  
 տայ իրանց: Երևի, աքաղաղը յաղթում էր նրան: Նա  
 գնում էր կուտ բերում և տաս-տասնուհինգ բուռը շար-



Աղւէսն եկել ու պուպուզ նստել էր

մաղ գարի փռելով նրանց առաջ, հազիւ ազատում էր  
 աքաղաղի ձեռքից:

— Դէ կեր ու կշտանցիր, — շող տալով խօսում էր ապէրը:

— Թըկ, թըկ, թըկ, — գարին հաւաքում էին հաւերը,  
 իսկ աքաղաղը՝ կը՛չ-կը՛չ -կը՛չ և ծիծաղում էր իր տիրոջ վրայ  
 և կուլ տալիս հատիկները:

— Նրանք ուտում, խմում, կշտանում՝ էին և մեկնում

բակի խորքերը՝ քշուշ անելու: Իսկ աքաղաղն, որպէս յաղթող հերոս, ցատկում էր մի բարձր տեղ ու այնտեղից հսկելով իր հարսներին՝ անդադար կրկնում էր իր զիլ-զիլ «ծուղրուղու»ն:

Մի անգամ էլ երեկոյ էր:

Հաւերն իրենց փահլեանի հետ հաւաքւել էին ապօր տան դուռն և կուտի էին սպասում: Ո՛րտեղից որ էր, մի սոված աղէս՝ եկել էր ու հեռու-մօտիկ, խոտակիտուկի վրայ՝ պուպուզ նստել: Աքաղաղը նկատել էր էն սատանի ջնսին (ցեղ) ու էնքան ճրչացել, ծղրտացել և հաւերի հետ հարայ էր տւել, որ պառաւն նրանց կանչ ու աղաղակի վրայ դուս էր եկել դուռը՝ բան-ման իմանալու:

Պառաւի աչքը լաւ չէր կտրում. աքաղաղը կարծես թէ այդ գիտէր. երբ նա դուրս է գալիս, ձեռքը ճակատին տարած սրան ու նրան նայում, աքաղաղը ճրչալով դէս-դէն է վազում և ծուլ ըլում (ցատկել): Պառաւն աղէսին տեսնելով, եղելովթիւնը հասկանում է և աջ ու ձախից օգնութեան կանչելով՝ աղէսին փախցնում—յետ ածել է տալի: Այսպէս, մեր փահլեանն աղէսից անգամ չէ վախեցել և իր ձեռք առած հնարքներով թէ իրեն է ազատել գազանի սուր-սուր ճանկերից և թէ իր կտրիկ-մտրիկ հաւերին:

Շատ անգամ պատահում էր, որ հարևանի հաւերը՝ գալիս խոռոչում էին իրան հաւերի հետ: Պահ, աչքդ բարին տեսնի, իսկոյն ցած էր թռչում և «կօ, կօ, կօ, կղօօ, կօ, կօ, կօ» անելով՝ վազում էր կտցահարում և և դուրս քշում: Բայց աւելի խիստ էր, աւելի կրակոտ՝ երբ մի օտար աքաղաղ կրնկնէր իրանց բակը: Այնպէս գզում, այնքան ծեծում և ծւատում էր ճանկն ընկածի միսն ու փետուրն, որ արիւնլիկ արած, փախցնում էր ու հետևիցը գոռում:

—Ծնւղ-րո՛ւղն՛ւ, — այսինքն, թէ՛ «գնա, որտեղ քոնն ասես, այնտեղ էլ իմն ասա»:

### III

Պատահեց որ մի գիշեր գողերն եկան ու ապօր հաւաքունը կտրեցին: Եկողները հազիւ կարողացան հաւերին հաւաքել թառից, իսկ աքաղաղին, երևի մոռանալով, կամ թէ գզուշանալով, ձեռք չըտւին, աւարն առան ու հայդէ:

Առաւօտը լուսացաւ. լոյսը ծագելուն պէս աքաղաղը տեսնում է, որ իր հարսները չըկան. էլ ճի՛շ ու ծղրտո՛ց, էլ կանչ ու աղաղակ, էլ ծնւղրուղու և մխկոտոց, հաւերը չըկան ու չըկան: Նորափեսան դէս ու դէն է ընկնում, քունջ ու պուճախ վազում, աղբ ու աղբանոց հասնում,—նչ մի տեղ չի գտնում իր սիրունատես հարսներին: Աքաղաղը մինչ այս դարդ ու կրակի մէջ այրւած ու խորւած փրնտրում է նրանց, ապէրը դարմանում է թէ՛

—էս հաւերն ո՛ւր են, որ կուտ ուտելու չեն գալիս:

Մին, երկու սպասելուց յետոյ, ճարը կտրած՝ գնում է տեսնելու: Գնում է, բայց էլ ի՛նչ. ո՛չ հաւ է գտնում հաւաքնում և ո՛չ աքաղաղ: Հայ դէս, հայ դէն, էս մի հարևանի բակը, էն մի փողոցը, մօտակայ կտուրները, բայց դարձեալ հաւերը չըկան: Ապէրը քօրփօշման գալիս է տուն և ախն ու մուխը քթից արձակելով, պատմում է իր կրնոջը թէ՛

—Բա չէս ասի, ա՛ կնիկ, հաւերը գողացել են:

—Ի՞նչ ես գժւել, մարդ Աստուծո՛յ, էն որձակի հոլց ո՞վ կարէր սիրտ անի ու հաւերին ձեռք տայ:

—Ո՞նչ, Աւետարան, էն Աստօժը, հաւերը գողացել են:

Եւ մի վերջին անգամ էլ դուրս են գալիս և տան մեծ ու փոքրով հաւերին փնտրելու գնում: Նրանց հետ է լինում և այդ գիշեր ուրիշ քաղաքից եկած ապօր փոքր եղբորորդին՝ Արմենակը: Նրանք ամենքը մի կողմը ցրւելով, սկսում են տեսած տեղը մէկ էլ նայել, երկու էլ. բայց հաւերը կորած են ու կորած...

Փոքրիկ Արմենակը հազիւ 10 տարեկան էր: Փնտրելու ժամանակ, նա մտնում է աղբանոցին ու տեսնում մի աքաղաղ: Նա չէր իմանում այդ աքաղաղի բնաւորութիւնն և ուզում է բռնել, կարծելով թէ՛ դա էլ է կորել: Բայց «Չանիդ մեռնեմ, աքաղաղ...»: Շուռ է գալիս և իր սրտի դայրոյթը տղայիցն է հանում: Ցատկում է երեսին, ոտքերով կանգնում է Արմենակի կրծքին ու կտցով նրա երեսի միսը ծւատում: Արմենակը գոռում է.

—Վայ, մեռայ, օգնեցէք...—և ընկնում է գետին: Աքաղաղն էլ այդ էր ուզում. նստում է նրա վրայ և թեւաթակ տալով ծղրտում.



—Կնւ-կնւ-կնւ կղնւ՛ւ-կնւ-կնւ-կնւ, այսինքն թէ՛ «գողին բռնել եմ, եկէ՛ք, հասէք»:

Արմենակի ազգականներն, իմանալով աքաղաղի բարձրացրած հարայ-հրոցը, վազում են ուրախացած, կարծելով թէ աքաղաղի կանչը հաւեր գտնելու համար է: Գրնում են և ի՛նչ տեսնում. կրակ կտրած «Փահլեան աքաղաղը» Արմենակին կիսաշունչ արած գետին է փռել:

Նրանք հազիւ ազատում են նրան. հաւերի ցաւը թողած՝ վազում են բժշկի ետևից, որ երեսայի ծւատած երեսին դարման անեն:

Այնուհետև աքաղաղին՝ այդ արարքի համար, ապէրն ու միւսներն, ոչինչ էլ չեն անում: Նրանք լաւ էին հասկացել թէ՛ «Փեսան» հարսներից զրկւած՝ գժել, դարերն է ընկել:

(Արտատպած «Հասկեր»-ից)



Ս.ԳՌԱՆԻ ԼԵՁՈՒՆ

Թուին տեց ագռաւը,  
եկաւ նստեց մեր ծառին,  
—Ղոսք, զոսք, զոսք...

Դառն ու գուժկան նրա ձայնը  
Գուշակիչ է միշտ չարին.  
—Կրակ, կրակ, կրակ...

Ցատկեց նա ցած՝ ծառի տակ,  
Ոստ-ոստում է, կըռ-կըռում.  
—Ղօն, ղօն, ղօն...

Գնդակ զիպչի բկիդ տակ,  
Քսի գոռաս անկշտում.  
—Չօն, չօն, չօն...

Թռաւ, նորից ծառն ելաւ,  
Կրկնեց իրան կռաւոցը.  
—Ղաւ, ղաւ, ղաւ...

—Էս տեսակ էլ վայրի հաւ,  
չէնց կըբանայ կտուցը՝  
—Ցաւ, ցաւ, ցաւ...

Վ Ա Ր Դ Մ Ա Յ Ի Ս Ը  
(Զւարճալիք)

Հէնց որ կըգոյ վարդ մայիսը—  
Սմիսների թագուհին,  
Նախշ ու նկար էն ամիսը  
Նոր կիանք կըտայ ամենրին:

Թռչունները թռուրդալով,  
Մրջիւնները վրխտալի,  
Չորս ու բոլոր ծըլըլտով՝  
«Մայիս» կերգն խընդալի:


Թիթեռնիկներ, ծանծ ու բզեզ՝  
Հերթ չեն տալիս մեր մեղին,  
Օձ ու լորտուկ, գորտ ու խլէզ՝  
Նրանք էլ կերպեն խմբովին:

Բաս գա՛ռները, տես էն կողմը,  
Տես ի՛նչպէս են արածում,  
Արածում են եւ շա՛տ մեղմը  
Գառնարածի հետ երգում:

Նրանք սրտագին կանչում են՝—մա՛,  
Գառնարածն է բշում՝ —յի՛ս,  
—«Մա՛-յի՛ս», «մա՛-յի՛ս» երբ  
միանայ՝  
Կըստացի մեզ միշտ «մայիս»:




### Մ Ո Վ Ա Ծ Կ Ա Տ Ո Ւ Ն



Նազիկ շա՛ն, դու մուկ կու-  
տես,  
Ախորժակդ ի՛նչպէս է,  
Չը՛նի շունը գգեց քեզ,  
էնդուր քէֆդ էլ փիս է:  
—Միայժ, միայժ...

Վայ-վայ, ախո՛ս իմ կատու,  
Չէնդ էլ է կտրելի,  
էտ ի՛նչ օրի ընկար դու,  
Շունը բուզդ է բռնել:  
—Միայժ, միայժ...

«Ո՛չ թէ շունը, բարեկամ,  
Մօտ մի շաբաթ է անցել,  
Սոված փորով ընկած կամ  
եւ մկան համ չեմ տեսել»:



### Գ Ի Փ

### Մ Ա Ր Տ Ը



Է ո՛ւ... փնփն ո՛ւ ո՛ւ... փչում է  
կատաղաբար մարտի քամին և ա-  
մենքի սիրտն ու հոգին ան ու դո-  
ղով լցնում:

«Յը՛ռռռ...» թռչում է կոր-  
ծանիչ քամին և՛ սար ու ձոր իրար գլխի տալով, մտնում է  
անտառների և ծառաստանների մէջ:

«Վը՛զզզզ...» դողում և մրմնջում է ամեն մի ծառ  
ու ծաղիկ, թուփ ու ցօղուն և անժամանակ մըսում և  
դալկանում:

Եւ այսպէս տարւայ տամներկու ամիսներից մարտի  
նման գիժ, անդնջում ամիս չըկայ: Իր ծնած օրից մին-  
չև այսօր էլ նա պատուհաս է ամենքի համար:

Ամեն տարի, հէնց որ մտնում ենք մարտ ամիսը,  
կամայ ահամայ յիշում եմ ողորմած հոգի Քալի նանիս  
պատմութիւնը:

Լուսահոգի նանս պատմում էր. «Մի Աստծու անի-  
ծած պառաւ է լինում, այնքան չար, այնքան թունալից,

որ օձին թքէր, օձը կը սատակէր, ջրի գնար՝ ջուրը կը ցամաքէր, կանաչը կոխէր՝ կանաչը կը չորանար: Նա ունենում է երկու տղայ և մի աղջիկ: Անդրանիկի անունը լինում է Մարտո (Մարտիրոս), միջնակինը՝ Ապրես, իսկ ամենից կրտսեր-աղջկանը՝ Մայի: Գարնանամտին, երբ պառաւի ոչխառները ծնում են, նա փոքրիկ գառներն անում է Մարտոյի առաջն, որ հանդը տանի արածացնի: Մի քանի օր մեր գառնարածը մեծ ուշադրութեամբ կատարում է իր պաշտօնը: Մի օր էլ նա հանդումն եղած ժամանակ, գառները թողնում է արածելիս և ինքն ընկերանում է իրանց հարեան գառնարածների հետ, սկսում է խաղ անել:

«Կանաչ դա՛շտ և մանկական խա՛ղ: Մարտօն այնքան տարւում է խաղով, որ մէկ էլ, երբ յանկարծ միտքն է ընկնում իր գառները, վազում-զնում, տեսնում է՝ որ գայլն ընկել է գառների մէջ, մի քանիսին վիրաւորել է, մի քանիսին պատառոտել, և մի քանիսին էլ տարել-փախցրել է, մնացածներն էլ ցան ու ցրիւ են եկել ու կորել: Անդգոյ՛ Մարտօն՝ մինչև երեկոյ լաց ու սքով անցկացնելուց յետոյ, երեկոյեան մնացած գառները քշում, բերում է տուն:

«Ո՛չ իմանար պառաւը...

«Հէնց որ լուրը հասնում է նրա ականջին, մահակն առնում, տնւր թէ կտա՛ս, սկսում է թակել, «բան հոգի» անել խեղճ Մարտօին: Թակելուց յոգնելով, այնուհետև սկսում է անիծել.

«—Գժևս, դարերն ընկնես, Մարտօ՛, օր ու արևդ խաւարի, Մարտօ՛, սուգ ու շիւանն ըմբրիցդ (կեանքիցդ) անպակաս ըլի, Մարտօ՛, հաց ու ջուրդ հառամի, Մարտօ՛...

«Միւս եղբայրն ու քոյրը—Ապրեսն ու Մային մէջն են ընկնում, մի կերպ ազատում են Մարտօյին պառաւի ձեռքից: Մարտօն հազիւ հազ իրան պատի քամակը գցելով գլուխն առնում է և փախչում է տնից: Եղբայր ու քոյր երեք օր սպասում են իրենց մեծ եղբօրը, երբ տեսնում

են, որ էլ չի վերադառնում, մէկը միւսի ետևից դուրս են գալիս փնտրելու փախստական Մարտօյին...»

Քալի նանի պատմածքի տպաւորութեան տակ՝ երեխաներս «վախկոտած» կպչում էինք նանի ծնկներից և կրկնում:

—Գրողը տանի քեզ, ինչ որ պառաւ էս, հա՛.


—Քաւթարքօսու վայ դառնաս, պառա՛ւ.

—Նանի ջան, նանի, ետո՛յ, ետո՛յ, ասան տեսնենք՝ վերջն ի՛նչ եղաւ:

Քալի նանը մեզ գրկելով, աւելի ոգևորւած շարունակում էր.

«Ահա այն օրից սկսած, գարնանամտի ամիսը՝ Մարտօյի անունով կոչում է Մարա և չար պառաւի անէծքի համաձայն՝ այդ ամիսն անցնում է գժի նրման: Մի երկու օր արև է՝ ուրախութիւն, մի երկու օր խաւար է՝ տխրութիւն, մի երկու օր անձրև է՝ լաց ու արատաւ, մի երկու օր էլ քամի է՝ բարկութիւն, իսկ վերևից լսող գողգողոցը, Մարտօյին կպչող փայտի թակոցն է:

«Մարտից յետոյ՝ միջնակ եղբայր Ապրեսն է աշխարհ գալիս: Նա «սլարած» (թմրած) բնութեանը կեանք ու ապրել է տալիս, կենդանացնում է, և այդ ամիսն էլ Ապրեսի անունով կոչում է Ապրիլ:»



Մարտօն՝ պատի քամակին

—Վայ, ինչ լաւ ախպեր է եղել է, ընդհատում էինք մենք:

—«Իսկ երբ Ապրեսն էլ երկար փնտրելով, իր փախստական եղբօրը չի կարողանում գտնել, նրա քոյր Մային է սկսում դաշտ ու ձոր ընկնել, անտառ ու ծառաստան մտնել, բաղ ու բաղջա վազել, ամենքին ուրախացնել, ամենքին զարգարել, բոլորին նոր ու նոր ընծաներ բաշխել, որպէս զի՝ գոնէ այդ լաւութիւնով կարողանայ իր կորած եղբօրը գտնել, որ գոնէ մէկը՝ ծառ կամ թուփ, քար կամ թումբ, կանաչ կամ ծաղիկ, թռչուն կամ սողուն, չորքոտանի կամ անասուն, ասեն թէ եղբայրն ո՞ւր է:

«Եւ անա Մայնի անցած տեղով ձեր աչքը կըտեսնի, ձեր ականջը կը լսի, որ բնութիւնը շունչ ու հոգի առած, ծախ լեզուով, ճանճի բրզգոցով, ծառերի սրւարկոցով, մի խօսքով, ամենքն ինչով որ կարող են՝ փախում են ու կանչում.—«Մ ս ս... Մայի, ս ս ս Մայի, արի ասենք, արի ասենք»: Անա Մայնի անունով էլ այդ ամիսը կոչւում է Մայիս...»


Հագիւ նանը վերջացնում էր իր պատմութիւնը, մեր քունը յաղթում էր մեզ և մենք ննջում էինք...

(Արտատպած «Հասկեր»-ից)

### Յ Ե Ղ Ե Ղ

Անձրև է գալիս քըշ-քըշալի,  
Ցած է թափւում փըշ-փըշալի,  
Ախր այն անձրև, ինչ ես կատղել,  
Գոնէ մի քիչ՝ քիչ-քիչ արի:

Ես անձրև չեմ, չէ, այլ յորդ հեղեղ,  
Աշխարհ կանեմ ջուր-ջրրհեղեղ,  
Ուր որ կամենաք ինձնից փախչել՝  
Չեզ կըհասնեմ ամեն մի տեղ:



### ՆԱՆԻ ՆԻԿՐՆԵՐԸ

1906

«Միփ-ծիփ, ծիփ-ծիփ, այն թըխամէր,  
Ճուտիկներդ առ, դէսը բեր,  
Կուտ եմ տալու ընտրած կորեկ՝  
Եկէք, կերէք ու շուտ կորէք»:  
Թուխսն եկաւ՝ կըրխկալէ,  
Չագուկները՝ ծըծըլալէ,  
Եկան նանի դուռը դառան,  
Ժըւժըւոցով գլուխ տարան:  
Նանը նրանց կորեկ տուաւ,  
Տես թէ ինչպէս աքլար ու հաւ,  
Մէկը միւսին կըտկըտալի,  
Մեծ-մեծ կուտին են վագ տալի:  
Իսկ թոռները՝ տղայ ու աղջիկ,  
Թընգթընգում են խունջիկ-մունջիկ:  
Որ նանն իրանց մէկ-մէկ ընծայ  
Չագուկներից բռնի ու տայ:



«Տես էն ճուտիկ՝ կրմրշտուրիկ,  
 Քեզ եմ տալիս սիրուն Սուրիկ,  
 Իսկ Գիսակին սպիտակ ձագը,  
 էն կուարար գիժ որձակը:  
 «Չալտիկ ճուտն էլ, էյ Գայեանէ,  
 Լաւ պահպանիր, էն քո փայն է,  
 Սևուկ-մևուկ արլորիկն էլ՝  
 Թո՛ղ Իսկուհուն լինի նւէր:  
 «Իսկ ինձ մնայ թխսամէրը  
 Ու էն մարիկ ճուտիկները,  
 Որ մեծանան և ճու ածեն,  
 Նորից մէկ-մէկ թուխսը նստեն»:

Թ Թ Ի Յ Կ Տ Ր Ա Թ Ե Ր Ե Խ Ա Ն  
 (Նւէր իմ սան Սուրիկին)




այրիկ, ը՛... ըհր՛-ըհր՛,  
 ծիծի տու,  
 Ետտ չէ, մայրիկ ջան,  
 մի պիծի տու...

Չէ, բայիկ ջան, չէ, ծիծին շար չի,  
 Կատուն տարաւ, տես, ո՛նց կը փախչի...



Ա Յ Ծ Ա Ր Ա Ծ Ղ Ա Ղ Օ Ն

1




էքիմ Գէորգն եօթ արու զաւակ  
 ունէր: Նրանցից անդրանիկը-Ղահ-  
 րամանն, որին Ղաղօ էին կանչում,  
 փոքր հասակում ծաղիկ ընկնե-  
 լով՝ և սաստիկ չօփուռ էր մնացել, և մի աչքն էլ ծաղ-  
 կից կուրացել-ծաղկատար էր եղել: Ղաղօն քանի Ղահեկ  
 էր՝ ոչինչ, ամեն բանում կտրիճ էր. երբեմն այծարած էր,  
 երբեմն ուլարած, երբեմն էլ գնում էր եկեղեցի և Տէր-  
 Մարտիրոսին ժամասացութեան ժամանակ օգնում: Օ՛, նրա  
 երգած «Տէր ողորմեան» և «Սուրբ Աստուածը» դեռ այսօր  
 էլ գիւղացիների ականջումն են: Իսկ նրա սազ ածելու և  
 սրինգ նւագելու շնորհքն՝ իրանց գիւղում համարեայ թէ  
 ոչ ոք չունէր:

Նա թէև մի աչքով կոյր էր և նոյն իսկ «համբարք»  
 էլ չգիտէր, բայց և այնպէս իր հաշիւը շատ լաւ էր պա-  
 հում: Տասնեակ տարիներ նախրապանութիւն անելով,  
 գրեթէ անգիր էր արել իր արհեստը: Ղաղօն մէկէն ի մէկ  
 չէր կարող ասել թէ իր նախրի մէջ քանի այծ ու քանի  
 ուլ կայ, բայց ջուխտ ու կենտի հաշւով և ապրանքատի-  
 րոջ անուններով նա իսկոյն իմանում էր թէ այսօր ո՞ւմ  
 այծն է պակաս նախրից և կամ ո՞վ չէ, ուղարկել արօտի  
 իր ուլը:

Գիւղացիք քաջ գիտէին Ղահրամանի հաւատարիմ բը-  
 նաւորութիւնն և իրանց այծն ու ուլն աներկիւղ նրա ա-  
 ռաջն էին անում:

Ղաղօն երկու ընկեր ունէր. մէկը Գարիտակենց Նէսօր տղան էր, որ ուլերն էր արածացնում, միւսն էլ՝ իրանց Բօնախ շունն, որից նա իր այծարածուլթեան ընթացքում երբէք չէր բաժանւի:

Ղաղօր Ղահելութեան հասակում ոչ ոք չէր յանդգնի նրա հետ հանաք անել կամ նրա նախրին ծուռ աչքով մտիկ տալ, բայց երբ անելացաւ-ծերացաւ և առողջ աչքովն էլ՝ այնքան էլ լաւ չէր տեսնում, ամեն մէկը սկսեց նրան նեղացնել և իր գործից ձանձրացնել: Մանաւանդ գիւղի շարածճի մանուկներն՝ օ՛, Տէր մի արացէ թէ մի



Ղաղօի ընկեր Բօնախ

օր աներումը անգործ մնային, իսկոյն խմբէ խումբ հաւաքւում, գնում էին հանդը, նախրի մօտ և Ղաղօի գլխին էն խաղն էին բերում, որ ասել անկարելի է: Ղաղօն անձրև ու կարկուտ ասած բանն իսկի չէր սիրում, որովհետև, նախ՝ իր շորերն ու տրեխներն էին թրջւում և ոտքից ու հագից հանւում, ապա՝ իբրև կոյր ու տարիքով մարդ, շուտ-շուտ ոտքը սօթ էր պրծնում և ցեխի մէջ փուռում ու ցեխակոյոր էր լինում, և՛ երրորդ, անձրևի ու կարկուտի ժամանակ անտէր այծերը կամ կտրկան էին լինում և այս ու այն կողմը ցրւում, և կամ դար ու փոս ընկնելով՝ այլ ևս ինքը չէր կարողանում նախրն իրար հաւաքել ու ժամանակին կթի բերել: Շատ անգամ նոյն իսկ, այդ «գէշ» եղանակներին, այծերից մի քանիսը մնում էին չօլումն և դայլ ու արջի փայ դառնում: Ահա հէնց այս էր իսկական պատճառը, որ Ղաղօն մահու շափ ատում էր «թացէին» եղա-

նակը: Տղաներն այդ լաւ գիտէին և ամեն տեսակ խաղ էին խաղում նրա գլխին:

II

Մի անձրևախափան օր, երբ Ղաղօն նախիրը հանգից քշել էր տուն՝ կթի և այծերը Հէքմի «չօթօն» (դարմանանոց) արւած սպասում էին, որ ամեն մարդ գայ, իր կիթը կթի: Իսկ ինքը՝ հագիւ մի քիչ հանգստացած, նստել էր իրենց սրահումը և «սաղը» ձեռք առած զընդ-զնզացնում էր ու ճաշի սպասում, յանկարծ՝ որտեղից որ էր, շարածճի տղաները հաւաքւեցին Հէքմի կալը:



Ղաղօն սաղ ամելիս

Մինչ մէկի հարսն ու միւսի սկեսուրն էր եկել իրանց այծերը կթելու և մինչ Ղաղօր մայրը, պառաւ Քալի նանը, նրա համար մի շարեքաթաս «կօնչօլ» (կերակուր) էր պատրաստել, որ նա ճաշի ու նախիրը նորից արօտի տանի, —մեր մանուկները նստոտել էին չօթօլի մօտ դտնւած սաղարտախիտ տանձենու սուերի տակ և առանձին քրչփչում էին:

Ղաղօն՝ հէնց նոր էր նստել հացի. Բօնախն էլ կողքին երկարւած, դունչը դրել էր առաջին երկու ոտքերի վրայ և պատտոի էր սպասում, որ «համփ» անի և կուլ տայ... Այդ միջոցին մանուկներից մէկը, Փառնանց փոքրիկ Վասիլը, ծոցից մի թղթակտոր հանեց և սկսեց բարձր ձայնով «սուսումուտ» կարգալ. «Տղերք, Ասածու պատիժը հասել է, փալչի ուստայ Աթին էսօր գիր է բաց արել, էս է, որ-

տեղ որ է, մի թունդ անձրևախառն կարկուտ է գալու:

— Ա տնածակ, դորթ որ, հրէն «ճալու» կողմը ամպել է ու գէշ սևակներ, — մէջ ընկաւ Սաքօն:

— Պա հօ հօ, ընդուր իրիկունը երազումս խաղող էի քաղում է. — աւելացրեց Մադին:

Այս խօսքն ու զրոյցը Ղաղօն որ իմացաւ, Տէր իմ Աստուած, ասն թէ ի՞նչ արաւ. տեղից վեր թռաւ, մահակն ձեռքն առաւ, ու աղերանց ետևիցն ընկաւ: Էլ անպատիւ, անկարգ խօսքեր, էլ հէքն ու մէր, էլ հին ու նոր, էլ ազգ ու տակ չը թողեց. թուքը բերանը կալած, բոլորն իրար խառնեց, որովհետև ատելով ատում էր և անձրևն, և կարկուտը և առհասարակ ամեն մի հակառակ խօսք:

Մինչ մանուկները, հեռու մօտիկ կանգնած, ջգրու կրկնում էին Աթնի գուշակութիւնն ու իրանց երազները, Ղաղօն, պատատակերին էլ քար ու կիր չը թողեց, ձեռքն ընկածն անդադար շարունակ էր ու հայհոյեանքախառը կրկնում.

— Բա ի՞նչ. բա ի՞նչ, արև է անելու, որ մեռնեք, արև է անելու:

Քալի նանն իմանալով իր որդու անել զրութիւնը, դուրս եկաւ կալ, սկսեց քաղցրաբար խնդրել մանուկներին, որ հեռանան, բայց երբ նրանք չը լսեցին պառաւ կնոջ թախանձաքին, նա սկսեց. «Ի՞նչ էք ուզում էս անձար ողորմելուց, ի՞նչ էք կատաղել, դուռն է դուռ ընկել: Սպասեցէք Սօլօմը (Ղաղօի փոքր եղբայրը) գայ, աեսէք թէ ձեր արևը սրտեղ է մթնացնում»:

Ձէն ու ձունից՝ թաղեցիք դուրս էին եկել թամաշի: Մանուկները տեսնելով, որ բանը սուր կերպարանք է ստանալու, թողեցին ու փախան... Ղաղօն նրանց անհետանալուց յետոյ, հնգիւ հանգստանալով, վերադարձաւ, որ բրթուճն ուտի, բայց ի՞նչ տեսաւ: Կօնչօյն ու երկու հացը շան փայ էր դառել: Սոված Բօնախը հարայրոցից օգտուել, վրայ էր ընկել ու Ղաղօյի ճաշը մի լաւ մաքրագարդել:


Ղաղօյի արիւնը գլուխն ընկաւ, փայտն առաւ ու մանուկների ոխն էլ շանիցը հանեց. էնքան մահակով տուր

աւաւ նրան, որ շունը պոչը ետին ոտքերի արանքը կոխած, կըլանչելով՝ գլուխն առաւ ու կռոււ:

Մանուկների ծիծաղին վերջ չը կար, նամանաւանդ այն ժամանակ, երբ նրանք հեռուից իմացան երկու ընկերոջ, շանն ու Ղաղօի մէջ առաջացած կուրի իսկական պատճառը:

### III

Մի օր էլ հուքմի էր, Ղաղօի աւելի ջանել ժամանակներում... Մածկալ ու հոտաղ, բանուր ու մշակ, սայլապան ու փայտահատ, մի խօսքով, գիւղի մեծն ու փոքրը՝



«Չորմիշ» եղած (նստոսած) որոճում էին

գործի չէին գնացել: Ամեն մարդ իր տանն ու դռանը նստած, իր ընտանիքի հետ, հնից ու նորից, տան աղասպակասից զրոյց էր անում...

Փառնանց պատիկ Վասիլը, Օրդականց Մադին, Զիլաւանց Նիկալն ու մի երկու, թէ երեք էլ ուրիշ «նօքար» տղերք, «խօսքը մին» արին և վեր կացան գնացին, որ համ Ղաղօին ձանձրացնեն, «գաղաբեզար» անեն, համ էլ ծաղկաւիլ քաղեն հանդերիցը:

Այդ օրը Ղաղօն նախիրը քշել էր «Բէժանի դօբինը». է՛ն կանաչ տափերի վրայ՝ այծերից ումանք ցան ու ցրիւ եղած, մուշ-մուշ արածում էին ծաղկակոլոր խոտը, ումանք

էլ չորքմիշ եղած Ղաղօի առաջ որոճում էին: Ինքը Ղաղօն, փափախը դրել էր տակը, նստել մի ծառի տակ և շւին դնչին դրած՝ ինչ որ «կարէկտուր» երգ էր նւագում: Նրա հաւատարիմ ընկեր Բօնախ շունը, գունդ ու կծիկ եկած ծառի սոււերում, գլուխը կոխել էր պոչի տակ և խորը քնել, էն «թել-թել» կանաչ խոտերի մէջ:

Մանուկները հասան նախրին. նրանք առաջուց որոշել էին թէ ինչ պէտք է անեն: Ամենքն իրանց խօսքի համեմատ՝ նախրի շրջապտոյտ փորսող պառկեցին: Զիլաւանց Նիկալը վրայ ընկաւ, մի այծի առաջին երկու ոտքից բռնեց, շալակեց ու սկսեց չորեքթաթ փախչել: Նոյնը կըրկնեց նաև Օրդականց Մաղին... Շալակաւծ այծերը՝ մի այնպիսի զիլ աղաղակով մըկըկացին, մի այնպիսի հարահրոց բարձրացրին, որ ամբողջ նախիրը կտրկան լինելով խռտնեց ու գայլ տեսածի պէս սկսեց ցիր ու ցան ընկնել: Խեղճ Ղաղօն կարծեց թէ այծեր տանողները գայլեր են, ոտքի կանգնեց և որքան կողորդումը ոչ ժ կար սկսեց «հարան» կանչել:

—Այ քեափուր հա՛, այ քեափուր հա՛:— Այնուհետև իր ընկերներին դառնալով, սկսեց՝

—Բօնախ հօ՛, Բօնախ հօ՛, տարան, հասիր:

Մինչ շունը ոտքի թռաւ և սկսեց վազել շալակաւծ այծերի կողմը, Ղաղօն շարունակեց.

—է՛նէ՛յ Պեախ, Պեախ—Պեախն Ղաղօի ուլարած ընկերն էր, որն ո՛չ այնքան հեռու, ուլերն էր արածացնում:

Մինչև Պեարոսը կըզար և մինչև գիւղից Ղաղօի հաւարին օգնութեան կըհասնէին, Բօնախ շունը վրայ հասաւ, շալակաւծ այծերի ետին ոտքերից բռնեց, ձիգ-ձիգ անելով աղերանց ձեռներից խլեց և ընկնելով Մաղիի ու Նիկալի վրայ՝ նրանց գլորեց, շորերը ծւիկ-ծւիկ պատառ-պատառ անելով, ուզեց որ ետ փախչի... Բայց վնայ քու տղիս-տղայ, դարան մտած միւս ընկերները վրայ աւին շանը—է՛ն սուրը աւին խեղճ անասունին, որ Բօնախը կոնձկոնձալով գլուխն առաւ ու փախաւ, դէպի տուն:

Մինչ այս, մինչ այն, այծերը լսելով ուլերի մըկըկոցը՝ վազեցին դէպի նրանց. նրանք էլ թռչկոտալով վրայ ընկան իրանց մայրերի պտուկներին ու անսուշ-անսուշ կաթը ձրծեցին ու կշտացան:

Ղաղօի ոյժը կտրւել էր. այս օրհասական վիճակում Պեախն եկել՝ անջաղ միայն ծիծաղում էր:

Տղերքն այս անգամ հերիք համարելով իրանց խաղը՝ թողին Ղաղօին ու գնացին աւիլ քաղելու:

Այդ օրը, այդ դառն խաղից յետոյ, այծերն էլ կթի չգնացին, որովհետև ուլերն արդէն մէր էին եղել ու այծերի սախնքները դատարկել...

Իսկ Ղաղօն, մինչև իրիկուն հա՛ գւռում էր, հա՛ անիծում...

Եւ այս օրինակ սև ու մահ օրեր քաշելուց յետոյ՝ Ղաղօն վերջը մեռաւ և հազիւ հանգստացաւ չարածձի մանուկների տանջանքից:


Աստուած ողորմի հոգուդ, Ղաղօ՛...

(Արտատպած «Հատկեր»-ից)

### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Գիտակ, Միտակ, Տիրան, Միհրան, Թէև մի բառ, բայց վանկերում  
Վառօ, Մարօ, խելօք Միրան, Տարբեր միտք է պարունակում,  
Եկէք, տեսնենք, կարող էք դուք Երկունս էլ տան տիկնոջ ձեռքին  
Վճռել իմ այս հեշտ հանելուկ: Գործ են սոււում ժամանակին:

Մի բառ գիտեմ երկվանկանի, Խեղճ գեղջուկի օրը սև է,  
Չարագուշակ նա ձայն ունի... Եթէ երկար նա կը տևէ,  
Ուզենք, չուզենք՝ պատուհաս է, Առանց նրան գէթ մի տարի  
Բայց երկնքից ցած կըվազէ: Հազիւ անցնի լիքն ու բարի:



# Չ Ի Ա Ր Շ Ա Ի

րանք չորս թէ հինգ հոգի էին, եօթ-ութ տարեկան, մի թաղի և գրեթէ մի գերդաստանի երեխաներ—Աղբաբանց այս ու այն հօրեղբորորդու զաւակներն՝ Իսակին ու Միսակը, Տիրանն

ու Միհրանն և հինգերորդն էլ՝ Սուտլիկ Ստեփանը:

Նրանք, որովհետև երեխայութիւնից միմեանց հետ ապրած, մէկ-մէկու հետ խաղացած, շատ անգամ էլ, մէկը միւսի մօր կաթն ուտելով էին մեծացել և այդ մանկական հասակին հասել, այսօր, այդ թրուրուան ու կրակոտ տարիներումն էլ՝ նոյնքան միմեանց սիրելի էին ու մտերիմ և նոյնքան էլ կուսած ու իրարից նեղացած...

Բայց, այսպէս թէ այնպէս, զարմանալի էին նրանք՝ թէ իրանց խմբով և թէ բնաւորութեամբ: Տարւայ եղանակների, ամիսների, նոյն իսկ օրերի տարբերութեամբ էլ՝ փոփոխական էր նրանց խաղն ու պարը, խօսքն ու զրոյցը, տրամադրութիւնն ու ցանկութիւնը: Մի խօսքով, բնութեան յատուկ զաւակներ էին նրանք, կեանք կար նրանց մէջ, մանկական մաքուր կեանք, անմեղ ու անարատ հոգի:

Գարունը բացւում էր թէ չէ, նրանք միասին, դաշտ ու ձոր ընկած, բաղ ու բաղշա շրջելով, մի տեղ շիշիթ, ծնէփակ, զօխ ու բօխ էին քաղում, մի տեղից հազար

գոյսի ծաղիկներ փնջում, մի ուրիշ տեղ էլ՝ թուփ ու գիլասով կշտանում: Իսկ երեկոները տուն վերադառնալիս, չէին մոռանում նաև իրանց կորած էջերը գտնել, հեծնել և այնպէս ազավարի տուն վերադառնալ:

Ամառը գալուն պէս, նրանց ամենքի բախար բանում էր: Անտառների մօշը, շլօրն ու հունը և ուրիշ գանազան մրգեր, այգիների տանձն ու խնձորը: դեղձն ու թուզը նրանց փօրի գերիներն էին. դէսից-դէնից ստանում և կամ հէնց իրանք էին ձարակ-մարակ անում և կլտրկում (կուլտալ):

Աշունը մտնելուն պէս, շատ խաղող ուտելուց տեղներիցը հագիւ էին շարժւում: Եւ այս բոլորի ընթացքումն ի հարկէ, անպակաս էին և նրանց սիրելի երգ ու պարերն, և տեսակ-տեսակ խաղերն, որ զանազան անուններ ու ձևեր ունէին. ինչպէս օրինակ՝ «Ջիրիթախաղ» կամ «Ջիարշալ»-ը, «Մօլլու-մօլլու»-ն, «Կրնդափէտին», «Լագան-լագան» և ուրիշ սրանց նման հարիւրաւորները...

Մի անգամ, աշնան վերջին օրերից մէկին, երբ եղանակը պատահական կերպով գարնան եղանակի էր նման, մեր մանուկներն, էն եօթ-ութ տարեկան ցեցերից՝ շէկլիկ Իսակը, բոբիկ Միսակը, սրտոտ Տիրանն ու սուտլիկ Ստեփանը, վեր կացան—գնացին՝ «Ջիրիթախաղ»-ի, այսինքն ձիարշալ խաղալու:


Շատ հետաքրքիր էին նրանք մանաւանդ իրանց ձիաներով. մէկը հեծել էր իր ապնի ձեռնափայտը, միւսը մի ցախաւի կօթ, երրորդն ու չորրորդն էլ լօբու մի-մի սարի (ձող) և շարքով կանգնել ու իրանց հրամանատար Ստեփանի կարգադրութեանն էին սպասում:

Կանգնած ժամանակ էլ նրանք շատ անհանգիստ էին. ձախ ձեռքով բռնած ունէին շէքերի միջից անցկ կոցրած ձողերի ծայրերից՝ իբրև ձիերի սանձից, աջ ձեռքն առաջ ու յետ ձօձելով, ոտքերը յաճախ տափին էին թակում, որպէս թէ ձիաներն են ոտքերով գետինը տրօփում և առանձին ախորժակով էլ խրինջացնելով մեր սպիտակ մա-

տակի երկու տարեկան քուռակի ձայնն էին յիշեցնում ինձ:  
— Ի՛նչ, հի, հի, հի, հի... խրխշում էր Միսակի ձին:

— Փռռռ, հը՛ռ, հը՛ռ, հը՛ռ... փռնչում իր Բսակի քեօհլանը:  
— Սը՛, ս, ս, ս... բայա ջան, սը՛, ս, ս, գուրգուրում  
և փաղաքշում էր Տիրանն: Իսկ Ստեփանը, իր հեծած ձողի  
յետին ծայրով մէկ-մէկ խփում էր իր ընկերների փայտե-  
րի ծայրերին, որպէս թէ, ձիաները միմեանց աքացի են տալի:

— Ադա, սսում չեմ ձիուդ գլուխը քաշած պահի,  
հրամայում էր խոժոռած (բարկացած) սուտրիկ Ստեփանը  
երբ մէկն ու մէկին նկատում էր չափից դուրս անկար-  
գութիւնն անելիս:



Ստեփանը կըլտիպոզ՝ թոյ էր եղել

Վերջապէս, ձիաւորները պատրաստ էին: Հրամանա-  
տարը հարկաւոր պատուէրները տալուց յետոյ, բարձրա-  
ձայն գոռաց.

— Մին, էրկու, իրէք... և հնչդէ, բոլորը մէկից չափ  
ընկան ու թռան: Ամեն մէկն ուզում էր և միւսի առաջը  
կտրել և որքան կարող է առանձին գեղեցկութիւն և «երիշ»  
(ձև) տալ իր վագելուն:

Նրանք, մօտ մի ժամ վագեցին ու թռան, ծուլլլան ու  
ցատկեցին. էս մի բլրակի գլուխը բարձրացան, էն մի  
երանդից ցած թռան. ճանապարհի մի ծայրից խփեցին,  
միւսովը դուրս եկան... վագելիս էլ անդադար կրկնում էին:

Ով աղաք, աղաք՝  
Նա հասնի քաղաք,  
Ով յետի, յետի՝  
Նրա ձին փետի:

Ասում էին ու վագում... Էնքան վագեցին, վագ-վը-  
գեցին, որ ոտք ու ձեռքից ընկնելով, յոգնածութիւնից  
կարմիր պուտ դառան:

Քրտինքը սկսել էր կաթ-կաթ հոսել ճակատներից այ-  
տերի վրայ, այտերից՝ շրթունքէերն և այդ տեղից էլ շատ  
անգամ բերանն էին խաշտում...

Ու, այս կրակ կտրած խաղի ժամանակ, երբ մի վեր-  
ջին անգամ էլ պէտք է մօտակայ բլրակի գագաթն ելնէին,  
և հրամանատարի կողմից էլ պատուէրն արդէն տւած էր,  
յանկարծ՝ միւսներն աւելի քաջ եղան, ոյժ տւեցին իրանց  
ծնկներին ու հրամանատար Ստեփանից առաջ ընկնելով,  
շուտ բարձրացան բլրակի գագաթը: Եւ մինչ տղաները ու-  
րախութեամբ աղաղակում էին.

— Ե՛ս, ե՛ս, ե՛ս չնւտ հասնյ...

— Վայ, վայ Մէփանը յետի-յետի... Մէկ էլ, նայեցին  
տեսան, որ Ստեփանը կըլտիպոզ թոյ է եղել քամակի վրայ  
և շատ ամուր գետին է թրմփացել:

Էլ հերիք, փոքրիկներն իրանց յոգնածութիւնը մոռա-  
նալով սկսեցին խնդալ ու ծիծաղել՝ իրանց հրամանատարի  
անչնորհքութեան վրայ.

— Պահ, էնա վեր իր ընգնում հա՛, Մէփան, ձեռքերը  
ցած ու բարձր անելով ծիծաղում էր Բսակը...

— Տը՛րրը, կանգնիր Վասկա ջան, անագ էր անում Տիրանը  
իր ընկերոջ ձիուն...

— Վահ, դո՛ւ է, դո՛ւ է Մէփանի ձին, էնքան էլ գարի է ու-  
տացրել, որ թռչում է ու չիմնուս առաջն է ընկնում, խօ-  
սում էր բօբիկ Միսակը:

— Տղէքք, էն Աստոծը ես սուտ վեր ընգայ, արդարա-  
նում էր սուտրիկ Ստեփանը, ասի մին տեսնում՝ թոյ կըլեմ...

— Հա՛, սէց չէ, սնց չէ, սուտ վեր ընգար, հագիր ասես


լաւ գեղնովն ես դիրքել. ծաղրում էին երեխեքը մէկ-մէկու-  
յետեկից:

—Տղէրք, ոնց որ անումը Սուտրիկ է, ինքնէլ էնպէս  
սուտրիկ է եղել, համա ինչ լաւ ասել են է...

Վերջացաւ խաղը. հրամանատարը իր ընկերներէից վի-  
րաւորեաձ, վեր կացաւ և խոով-խոով, առանձին ճանապար-  
հով սուռն վերադարձաւ, իսկ միւսները՝ և՛ յոգնած ու թիւ-  
նից շարթ ու խուրդ եղած, և՛ այդ գէպքից խրատեաձ, կա-  
մաց-կամաց, անխօս ու անծպտուն՝ իրանց ձիաները ձեռ-  
նափայտ շինեցին և գետնին դեմհար տալով, ճանապարհե-  
ցին գէպի տուն...

Այնուհետև Ստեփանը մօտ մի ամիս տկար էր: Վայր  
ընկած ժամանակ, քանի քրտնած ու տաք է եղել, ոչինչ  
չէր նկատել, երբ եկել էր տուն, աննկատելի կերպով  
մըսել էր ու հիւանդացել: Թէև այսպիսի փորձանքներ  
շատ էր պատահել մեր փոքրիկ հերոսին, բայց այս ան-  
գամւանը վտանգաւոր էր համարուում և Թալալ հարը  
գրեթէ մի ամիս Ստեփանովն էր զբաղւած:

Այդպէս է միշտ, ով չափից դուրս կըխաղայ՝ նա կը-  
կաղայ...



### ԺԻՏՆ ՈՒ ՄԱՆՈՒԿԸ



ստիկ-մստիկ այ ծիտիկ,  
Քանի թռչես ծառից-ծառ,  
Գոնէ մի տեղ քիչ տիտիկ,  
Յոգնած թևիդ հանդիստ առ:

—Ճը՛ զգ-վը՛ ստ, ճը՛ զգ-վը՛ ստ, ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ,  
Ես յոգնելու սովոր չեմ,  
Կուզեմ լինեմ մեծ արծիւ,  
Որ աւելի շատ թռչեմ:

—Ա՛յ դու պստիկ մեծամիտ,  
Արծիւ լինել ցանկացար,  
Որ անպաշտպան ընկերիդ՝  
Իսկոյն անես կտցահար:

Էլ չը խօսեց ծիտիկը,  
Թևին տաւ ու թռաւ,  
Իսկ մեր խելօք աղջիկը  
Նորից գիւրքը ձեռքն առաւ:



### ԿԱԼՆՈՐԴԻ ՄՐՄ ՈՒՆՋՆԵՐԻՑ

ՆՕՆՕՎԵՐ, հՕՆՕՎԵՐ, հՕՆՕՎԵՐ Ծ...

Կալ արս, եղբ շան, կալ արս,  
Կալս մէջ ման ու ման դալ արս,  
Ցորենը բրնձան մեղ արս,  
Ծղնօտից էլ դարման քեզ արս...  
Այ եղբ բշէ, բշէ:

ՆՕՆՕՎԵՐ, հՕՐՕՎԵՐ, հՕՆՕՎԵՐ Ծ...

Պարտքի տակ կորել եմ, եղբ շան,  
Գեղամէջ մարդ չունեմ ինձ պաշտպան,  
Գուն էս իմ ախպէրը օղնական,  
Կալ արս, սաներից էս «ղուբբան».<sup>1)</sup>  
Այ եղբ բշէ, բշէ:

ՆՕՐՕՎԵՐ, հՕՆՕՎԵՐ, հՕՆՕՎԵՐ Ծ...

Եղբ շան, «համկալ»<sup>2)</sup> շան, ման արս,  
Էս օր էլ «չիգարդան»<sup>3)</sup> բան արս,  
Շուտ անենք, պարտքը տանք մեր աղին,  
Թէ չէ ձեռ կուտենք «հախ-նահախին».<sup>4)</sup>  
Այ եղբ բշէ, բշէ:

ՆՕՆՕՎԵՐ, հՕՐՕՎԵՐ, հՕՐՕՎԵՐ Ծ...

Վարեցինք, ցանեցինք միասին,  
Ննձեցի, կրեցիր քո ուսին,  
Կալ անենք, բստացիր քո բաժին,  
«Խրղուռն»<sup>5)</sup> էլ էս անեմ մեր «լաշին».<sup>6)</sup>  
Այ եղբ բշէ, բշէ...



1) Ձոն լինել, 2) վարուցանքի ընկեր, 3) սրտալի, 4) իզուր տեղը,  
5) մնացորդ՝ ցորենի և կոշտ հասկերի և 6) մարմին:



### ԵՂԻ ՕՐԵՐԻՆ

I

Ճ Ժ Ա Լ Ա Խ Տ Ի



որահաս գարուն է, բուն-բարեկենդանի  
տօներին \*):

Արևը՝ չարածձի մանուկի նման, երբեմն ուրախանում, ծիծաղում է սարու դաշտերի երեսին, երբեմն բարկանալով խոժոռում է, յոնքերը կիտում: Օղբ տաքացել է, գեղամիջի ձիւնը հալել, կալն ու կտուրները ցամաքել-չորացել են: Գիւղի դիմաց, դաշտերի վրայ, տեղաեղ միայն ձիւնը սպիտակին է տալիս:

Թամշէն Հանէս ապնի կալումն է. մանուկների ճժալախտու հարահրոցն ողջ թաղ ու թառակի մեծ ու փոքրին

\*) Գիւղում բուն-բարեկենդանն՝ «եղի օրերը» շատ ուրախ է անցնում, շատ...

Մի երկու օր էս, և ահա ոսպ ու լօրու Մեծ պասը գալու, չորելու է ամենքի դռան շեմքին և պահանջելու է, որ բոլորն իրան հպատակեն՝ յիտուն օր պաս պահեն:

Գիւղացիք, այս անախորժ պահեցողութիւնն ի նկատի առած, բարեկենդանի «եղի օրերին» ուտել-խմելուց զատ, այլև զանա-

տես է հրաւիրել: Վերի թաղի մանուկները, հորթարած ու խոզարած, հորիքչի ու գառնարած, բոլորը գրեթէ մի հասակի, 12-15 տարեկան, հաւաքւել են Աղբաբանց Հանէսի կալը, մի մեծ ճիւղ (շրջան) են կտրել, ամենքի ձեռքին մի մի պարանի կտոր, կամ իշի փորքաշ, և կամ լծի ամօղէն (կապ) կայ ու լախտ են խաղում:

Նրանք երկու խումբ են բաժանւած և ունեն մէկ-մէկ կառավարիչ: Ռուստամի կողմն են ընկել՝ անդնջում Ասլանը, տընք-տընք Բէժանը, կոկիկ Սօլօմանը, պստիկ Գիգօլն ու Փառնանց Բագօն: Իսկ Մերոնց Սէչօի ընկերներն են Վրդանի Ղաղարը, Սհակի Մամօն, Զիլաւանց Օսէփն ու Սաքօն և երկար Բագրատը:

Մամբի ընկերները հերթով ճիւղ են մտնում, շրջանաձև կանգնում և ամենքն իրանց լախտն իրենց ոտքի արանքում զետնի վրայ մեկնած՝ հսկում են որ միւս, շրջանից դուրս պտտող խումբը՝ չը կարողանայ գէթ մի լախտ փախցնել:

Այս անգամ շրջանի մէջ է Մերոնց Սէչօն իրան խումբով: Նա հրամաններ է արձակում, որ ամենքն աչալուրջ հետևեն իրանց լախտերին:

—Տղէրք, օրօն արէք (հսկեցէք), եաման (քաջ) Ռուստամը մինն ու մինիս լախտն որ տարաւ, բաններս գէշ է, բուրդ կը դնի, բամբակ կը գզի:

զան ուրախութիւններ, քէֆեր ու հանաք-շիտակ խաղեր են անում, կշտանում, որ յետոյ՝ Մեծի պահոց երկար ու ճիգ օրերին, հանգիստ սրտով բան ու գործի կենան, դաշտ ու հանդին նւիրեն:

Ճիշտ ասած, այդ օրերը թանկագին տօն են ամենքի համար առանց բացառութեան. տատն ու պապը, հարսն ու փեսան, աղջիկն ու տղան, մէրն ու մանիկը—բոլորը, բոլորը, ովքեր այդ միջոցին գիւղումն են գտնուում, կատարեալ ուրախ են: Նրանց ամենքի ուրախութիւնը զանազան է և համապատասխան իրանց հասակին ու անւանը: Պատիւն ու մեծարանքը տատ ու պապինն է, դափ ու զուռնէն՝ հարս ու փեսինը, կեր ու խումբը՝ ջահիլձուհուհներինը, «Ճժալախտին» ու «Վանչըռնուկին»՝ տղայ մանուկներինն, իսկ «Ճլօթի»-ն՝ աղջիկներինը:

—Դու առաջդ եշի (նայիր), մենք մեր բանը գիտանք,— մեծամտութեամբ պատասխանում են նրա ընկերները:

—Սէչօ, Սէչօ, տարաւ, տարաւ,— խափան է տալիս նրան Ռուստամն և ինքը յանկարծ ցատկում է շրջանի մէջ, տղաների ետևից երկու լախտ յափշտակում և սոււերի նման այնպէս է դուրս թռչում, որ ոչ ոք ոչ նկատում է նրան և ոչ էլ կտրում—աքացի տալիս, որով ճժի մէջ մտնելու հերթն նրան կրնկնէր և խաղը նորից կը սկսէր:

Ռուստամը լախտերից մէկը տալիս է ընկերներից մէկին և հպարտութեամբ գոռում:

—Տղէրք, ետ կացէք, թէ չէ բոլորիդ արենլիկ (արիւնլայ) արի: Նա լախտն օդում ձօձում է ու թրըխկ Սէչօի ձոններին, որն անվրդով կանգնել էր մնացած լախտերի առաջ և ոտքը դէմ արած՝ պաշտպանում էր յափշտակելուց և աշխատում էր կամ աքացի խփել հակառակորդին, և կամ պտտող լախտը նրանից խլել, որ դարձեալ տարւել էր նշանակում:

Անցնում է կէս ժամ: Եաման Ռուստամն ու անդնջում Ասլանն իրանց լախտատրոցով՝ դուրս են հանում մնացած լախտերը, բաժանում են և քիւս ընկերներին, և սկսում են շրջապտոյտ կանգնել և սուր թէ կրտաս՝ ճժի մէջ եղած խմբին տրաքօցահար են անում:

Ճճալախտու աւանդական սովորութեան համեմատ, այսպիսի նեղն ընկած միջոցին, թակուղ խումբը թամաշաւորներից մէկն ու մէկին օգնութեան է կանչում. Հակառակորդ խումբն, եթէ չը համարձակի գնալ և թակելով կանչւածին ճիւղը քշել, ապա կտրւած է:

—Աւետիք բիճա, այ Աւետիք բիճա, քու երեխանց արևադաղին, արի քօմագ արա (օգնիր) թէ-չէ կոտորւեցինք, —գոռում է ճժի միջից կառավարիչ Սէչօն:

Սէչօի այս համարձակ հրաւերը թամաշաւորներից ամենքին զարմացնում է:

Աւետիքը գիւղի գզիրն (ոստիկանն) էր: Սէչօն գիտե՛նալով Ռուստամի համարձակութիւնը՝ դիտմամբ օգնու-

թեան էր հրաւիրում գիւղի գզիրին, որը հեռու մօտիկ կանգնած՝ դիտում էր լախտախաղին: Նրանից, տարւայ ընթացքում, շատ անգամ էր ծեծ կերել թէ ինքը խէչօն և թէ առհասարակ ամենքը, նոյնիսկ ամենափոքր անկարգութեան համար: Այժմ «եղի օրեր» էին. հանաքի տրամադրութեան տակ, նրան լաւ տեղը բռնացրին մեր մանուկներն և կարծես թէ ուզեցին վրէժը լուծած լինել: Այս առաջարկութիւնը մի ուրիշ կողմն էլ ունէր. եթէ Ռուստամը չը համարձակէր այդ մեծանուն իշխանաւորի վրայ յարձակել, ապա ծեծւողներն ազատուում էին թակոցից:

—Տղէքք, քշեցէք, քշենք, Աւետիք բիձուն վախտին ձժենք,—Հրամայում է Ռուստամն իրան խմբին և վրայ պրծնում գզրին: Տնւր ու տրաքոց, լախտ ու շպպոց, այնքան հարւածում են գզրի ոտին-տոտին, մէջք ու թիկունքին, գլխին ու արևին, որ խեղճ գզիրը՝ մի ձեռքով կրծքի մէջալը բռնած, միւսով փափախը, վազում-մտնում է ձժի մէջ:

«Հրա, Հրա» ծիծաղն ընկնում է թամաշաւորների մէջ: Ո՞վ կուտի, գզիրը կուտի, ո՞վ չի ուտի՝ գզիրը կուտի, մէկ, երկու, տասներկու. էնքան տալիս են թէ նրան և թէ խէչօի խմբին, որ Ռուստամն ու իրան խումբը յօգնում, քափ ու քրտնքի մէջ մտնելով, վերջապէս կտրւում են և փշրւող ու խշրւող խումբը հազիւ ազատուում է օրհասական թակոցից:

Իսկ Աւետիք բիձէն, հանաք-շիտակ ծեծւելուց յետոյ, թողնում է ձիժը, վազում մտնում է հարևանի տուն՝ մի քիչ կոկորդը թաց-մաց անելու:

Հերթն այժմ խէչօի խմբինն է, հիմա էլ նրանք պէտք է շրջանից դուրս մնան լախտ յափշտակելու համար և ըսկրւում է նորից նոր խաղ:

## II

Կ Ա Ն Չ Բ Ռ Ն Ո Ի Կ Ի

Չորի թաղումն էլ իրարանցում կայ: Կարծես, բարեկենդանն ամենքի հոգու մէջ մտած՝ կենդանութիւն է տւել բոլորին: Այստեղ էլ մանուկների մի բազմամարդ խումբ, իրար գլխով ընկած, կերն ու խումբ մոռացած, հարահրոցով կանչանում է խաղում:

Կաշնբունուկի, օ օ օ, սա էլ պակաս խաղ չէ մանուկների շրջանում: Վայը տարել է նրան, ով կանչի ժամանակ չկարողացաւ հատ ոտքով թռչկոտալ ու շուտով հասնել բինէն. այնքան թամփ-թմփոցով բռնեցքներ կուտի դմբլօ խաղացողն, որ մինչև մէկել եկող բարեկենդանը հազիւ կմոռանայ իր կերած թրթուն:

Մանուկներից նա, ում սուր խօսքը սուր թրի նման կտրում, անցնում է ամեն մի խօսք ու զրոյցի ժամանակ, կանգնում է մի պատի տակ-բինում և սկսում է իր սրտի ուզածին «կանչ» առաջարկել: Մովորաբար «կանչ»-երով հրաւիրւում են տղաներից աւելի հեռու կանգնածներն, որ պէսզի նրանք միջոց չունենան, շուտ հասնել բինէն և որ միւսները կարողանան մի լաւ «վեր հատել» (ծեծել) նրանց:

«Կանչի» ժամանակ ձայնարկւողը ճարպիկութեամբ դուրս է պրծնում խմբից և առանց ծեծ ուտելու՝ հասնում է տեղ, ապա այնուհետև կանչամէրը լինում է նա:

Այս անգամ կանչամէրը լղարիկ Բադամն էր: Նա աչքի տակով նկատեց: որ գզրի տղայ Պետօն եկել է տղաների ետև, խնձորենու տակ, մէջքը թիկն տւած ծառին, միամիտ կանգնել է: Նա բարձրաձայն, աղմուկը խլացնող ճչով գոռաց.

—Կանչս հասնի Գզրի Պետօին:

Պէտք է ասած, այս հրամանը բոլորովին անակնկալ էր: Բադամի մտքովն անգամ չէր անցնի, թէ տղայի հայրը վերի թաղումը տուրուտրաքոց է կերել ձժալախաումը:

Այլ որովհետև գգիրը տարւայ մէջ շատերի կաշւին էր աղարել, շատ նանի բալա էր լացացրել ու շառմի (տուգանքի) տակ ձգել, մի տեսակ՝ էրւած սրտին մխիթարանք անելու համար, այսպիսի հանաքի օրերին, սուր էր՝ որ տալիս էին ձեռքն ընկած թշնամուն: Այսպիսի օրերին, ճիշտ ասած, գիւղի իշխանաւորի շունն անգամ հանգիստ չունէր, ուր մնաց նրա տէրը:

«Կանչ»-ի ձայնը տղերանց ականջ ընկնելուն պէս, նրանք աջ ու ձախ նայեցին, խլշկոտացին և տեսնելով Պետօին, բազէի նման վրայ տւին նրան և մինչ Պետրոսը տեղիցը կը շարժւէր փախչելու, տղերքը հասան, էնքան թրքմփ-չրքմփոց հասցրին նրա գլխին, որ խեղճը ծեծ կերած շան պէս՝ հազիւ հազ մխկտալի հասաւ բինէն:

— Ա՛ տնածակներ, վերի թաղումը հօրը թակեցին լախտով, էստեղ էլ որդուն էք բանհոգի անում, միքիչ խիղճ ունեցէք է,— ծիծաղում էին թամաշաւոր չափահասները:

— Հէնց լազաթը դրա միջին է,— կրկնում էին մանուկները և սպասում երկրորդ ու երրորդ կանչին:

Խաղը շարունակւում է:

— Ոտիկ-մոտիկ «բռնի եկայ»,— ասում է մայրն և հատ ոտքով առաջ է ցատկոտում մէկն ու մէկին բռնելու:

Օ՛, եթէ բռնեց մէկը, դարձեալ թրմ-թրմփոց է ըսկըւելու տղաների մէջ և ահա, ահը շատ է քան թէ մահը, բոլորն այս այն կողմն են փախչոտում՝ բռնելուց ազատւելու:

— Բռնեց, բռնեց, կալաւ տղերք, կալաւ:— Եւ յարձակւում են ճանկն ընկած տղայի վրայ, բայց նա խորամանկութեամբ գուրս է թռչում ձեռքերից ու անվտանգ հասնում բինէն:

Այժմ գնանք մեր փոքրիկ գեղջկուհիների մօտ, էն Աստու գառն արարածների մօտ և տեսնենք թէ նրանք ինչպէս են ուրախանում այս օրերին:

## III

Ճ Լ Օ Ր Թ Ի

«Եղի օրեր»-ի մանկական խաղերից ամենից հետաքրքիրն այս ճլօրթին է:

Գիւղի մատաղահաս աղջիկներն, էն փոքրիկ գեղջկուհիները, խումբէ-խումբ հաւաքւած մի որևէ «կալապանի» կամ սրահի տակ և կամ մի ուրիշ ծածկաբար տեղ՝ ճլօրթ են ընկնում, իրանց բարեկենդանական՝ զւարճութիւնները կատարում: Չէ՛ որ նրանք էլ այդ գիւղի հարազատն են, տատ ու պապերի սիրած ու փայփայած զաւակները:

Այս անգամ, էդ աղաւնսածագերի ժրվ-ժրվոցը՝ շատ դուրեկան կերպով, Սահակ ապնի տան կողմերիցն է լսւում:

Ահա և նրանք. շարմաղ կատին, թելու նատօն, սիրուն Սօնին, անգին Ջաւօն, չալաչք Նուշին, Վառօն, Մարօն և այլն, և այլն. հաւաքւել են բոլորն իրանց «բոխչաշորը» հագած՝ և կանաչ ու կարմրին տալով, ճլօրթ են ընկնում:

Ընդարձակ և բարձր ծղցկոցի, երկար ու ձիգ գերաններից մէկիցը կախ է գցած հաստ «շիջիմ» (գործւած պարան), ցած ընկած երկու ծայրերն իրար կապած, մի ջլալ էլ ծայրած է ու անդ կապած տեղը փռած: Աղջիկներից մէկը կանգնած է կալապանիները մի ծայրին, երկրորդը միւս: Մնացածներից մէկ-մէկ՝ հերթով նստում են և ճօճւում. ճօճելիս՝ երկու ծայրերին կանգնած ընկերուհիները մի քանի անգամ բօթում են նստածին, որպէսզի նա աւելի ամուր և արագ ճօճւի: Եթէ մէկը վախենում է, նրան չեն իջեցնում ճլօրթուց այնքան ժամանակ, մինչև որ նա իր ընկերուհիների առաջը մի որևիցէ գաղտնիք չը խոստովանւի և ընդհանուրի ուրախութեան պատճառ դառնայ:

— Ծըլթ-վօլթ-ճըլթ-վօլթ, հնչելով՝ գնում ու գալիս է ճլօրթը, և շարմաղ կատին ճօճում:

—Ինչքան կուզէք՝ զօր տւէք, ինձ կարալ չէք վախացնիլ և ընկնում է նա և զրոյց անում ընկերների հետ: Եւ այդպէս, երկար ժամանակ նրան ձօձելուց՝ թէ զցող աղջիկներն էին յօգնել, թէ կատուշի այտերը կարմրել՝ խնձորներ դառել:

—Աղչի, հէրիք բօլա՛, վերկաց, հմիկ էլ Սօնին նստի, բալքամ կարենանք նրա սրտի խոխուրդն իմանալ, այսայն կողմից առաջարկում են նրան փոքրիկները:

Վերջապէս հերթն անցնում է ամենքին. բոլորը նրատում և լի ու լի ընկնում են, երբեմն էլ սրա ու նրա աւէչն (ձևը) անում ու կուշտ-կուշտ ծիծաղում: Այս ծրվ-ծրվոցի վրայ, մէկ էլ տեսնում են, որ գզրի աղջիկ Օսանը, կամաց-կամաց եկաւ, կալապանը մտաւ և սրա ու նրա հետ խօսքի բռնւեց:

Փոքրիկների բախար բանեց, նրանք էլ հէնց այս էին ուզում, մէկ-մէկու աչքով արին ու ճլօթին նոր-մէկանց չաղացրին: Մի քանիսն, որ էնքան սրտով ձօձւեցին, Օսանի «էշին» (ցանկութիւնը) եկաւ. ընկերուհիներից մի երկուսը նրան ճլօթու հրաւիրեցին.

—Ախչի Օսան, արի ճլօթ ընգի, խի՛ ես հեռու կանգել...

—Արի ախչի, ընէնց ժաժ ես գալի, կասես թէ մեր գեղիցը չես:

Եւ աջ ու ձախից գուրգուրելով, Օսանին «կամ»-ի բերին ու նստեցրին ճլօթուն: Մէկ-երկու հանդարտութեամբ ձօձելուց յետոյ, սկսեցին՝ վրայ ու վրայ տալ: Այնքան զօր տւեցին նրա ձօձելուն, որ նա գնում-գալիս և ահագին ամրութեամբ՝ առաստաղին էր խփում գլուխը:

էլ չըհամբերեց Օսանը, գլխի ցաւը մի կողմից, սրտի հերսոտութիւնը (բարկութիւնը) միւս, նրան ստիպեցին օգնութիւն աղաղակել. և նա որքան պինդ էր աղաղակում, աղջիկներն աւելի ոյժ էին տալիս ճլօթուն և կրկնում.

—Հախաւ ան, հախտ, քու հէրը՝ բէհտին տեղը (իգուր) շատ նանի բալա ա լացացրել.

—Ա՛, կեր ու կշտացի, հօրդ ասա, որ էլ օյիններ

չբարքի մեր ախպօրտանց գլխին, թէ չէ մենք գիղանք նրա գլխին ի՛նչ օյին կըբերենք:

Եւ այս բոլորը կատարւում էր՝ որպէս հանաք, որպէս ծիծաղ ու գլարձութիւն. բայց՝ «հանաքը շիտակ» դառած, այդ երկու օրը շատ լաւ ծեծ են ուտում Աւետիք բիձէն և նրա որդիքը: Այս խաղերը շարունակւում են ամբողջ «Նգի օրերի» ընթացքում, բոլորը լիառատ սրտով ուրախանում են. մի քանի օր ուտում, խմում և մի օր էլ յանկարծ՝ լուսանում է Մեծ պասի երկուշաբթին և ամենքի գլարձութեանը պաս դնում:

(I և II դ. արտատպ. «Հասկեր»-ից)




Ի Մ Բ Ա Լ Ի Կ Բ

Լ եզլին մատաղ իմ բալիկի՛  
Ծիծեռնակ է ծըլււլան,  
Միշտ նւիրւած խաղալիքի՛  
Թիթեռնակ է թրուրոան...

Երգ ու պարը շրթունքներին՝  
Գառնուկի պէս մրկըկան,  
Դեռ չեմ տեսել ուրիշներին՝  
Մանուկիս պէս կըլալլտան.






### ԵՐԿՈՒ ԸՆԿԵՐ

Նագիկ ու բարակ մի գոյգ տատարակ՝  
 Մեր տան կրտրի տակ մտած, մի դարակ,  
 Ե՛լ ոգևորած բոյն էին հիւսում  
 Ե՛լ շատ էլ սիրով միմեանց հետ խօսում:  
 Ընկեր որձակն այսպէս էր նւում.  
 «Ուն, ւն, ւն ու վիճում, ուն, ւն, ւն ու վիճում,  
 Շտապիր, խնդրում եմ, աչքիս լոյս մախի,  
 Բոյնը պատրաստէ, ձու ածան հիմիկ:  
 Իսկ էն խորամանկ մարիկը քնքոյշ,  
 Կտուցը դրած ընկերի կրտցին,  
 «Վն-վն» էր անում, քաղցր ու անոյշ,  
 Թէ՛ համաձայն եմ ես քո ասածին...»  
 Այսպէս երկուսն ուրախ ու զւարթ,  
 Խօսեցին երկար, անհոգ ու անդարդ,  
 Ու իր մարիկի տւած խոստումով  
 Որձակը նրան գգւում էր սիրով:

Մէկ էլ յանկարծ՝ թը՛ռռռ, ելան ու թռան,  
 Թեւերը թափ-տապ վեր-վար խփելով,  
 Գնացին հեռնւ, դաշտ ու արտ մտան,  
 Որ յունդ ու հատիկ ուտեն ապահով:



### Խ Ր Ա Տ



Հնաքան, կորի, այ կրուկրուան,  
 Գլուխս տարար դու թամամ,  
 Մերը թողած խալխի դուան  
 Չու ես ածում ամեն գամ:

Ո՛չ աքլօրից ահ ունես դու,  
 Ո՛չ թրխսամէր հաւերից,  
 Առաւօտից մինչ իրիկու,  
 Կորած ես մեր դռներից:

Քեզ պէս հաւին՝ նանն ի՞նչ անի,  
 Ո՞նց կուտ տայ քեզ ուտելու,  
 Չարչին որ գայ՝ կրտամ տանի  
 Էժան գնով ծախելու:

Համա չէ, չէ. դու մեր հաւն ես  
 Օտարներից դու լաւն ես,  
 Էս անգամն էլ լինի քեզ խրատ՝  
 Էլ չըցանես կրտահատ:

# Կ Ա Տ Ի Ի Խ Ա Ղ Ը



ամհար Գրիգորը մի «Ասածու օխնած» մարդ էր: Ծերացել, մի ոտը գերեզմանին էր մօտեցրել, ու դեռ այդ հասակում՝ մեկին «վարդով չօռ ասած չրկար»: Իր բարի բնավորութեան և քաղցրախօս լեզվի պատճառով՝ ամենքը շարգում ու պատ-

ում էին նրան:

Նա շատ բախտաւոր մարդ էր. նրա ընտանիքը ժրվժրվում էր իր տղերանց ու աղջկերանց, թոռների և ծրուների մէն ու ձունով: Առաւօտ-իրիկուն ժամ գնալուց յետոյ՝ վերադառնում էր աուն, իրանց կալի դրողին մի ծառի տակ նստում, երեխաներին գլուխն էր հաւաքում և տմբողջ օրը նրանց հետ ընկած շան էր ասում ու շան խում:

Այնքան «մանրատու»-ի (երեխայ) հետ նա պահում էր և մի կատու: Երբ երեխաները հաւաքում էին Գրիգոր տպնի շուրջն և իրանց կրկնալրաւան դրոյցներով նրա հետ «բաս» (վէն) մրտնում, այդ կատուն էլ՝ որակց լինէր-չլինէր, ստեղծւում էր ու գալիս խառնւում էն փոքրիկների խմբին: Մի խօսքով նա դարձել էր տպնի հարազատներից մէկն և երեխաների հետ էլ քիր ու ախպէր: Ճիշտն ասած՝ Նեսօի, Պապնի, Արշօի Անուշի, Շամամի ու Նատօի հետ՝ շատ սիրուն կերպով սազ էր գալիս նաև Նաղլու փիսօն:

Նաղլու ախնք ու պրծանք, հաւատացէք մի չըտեսնւած անասուն էր նա: Գեղեցիկ ու համաչափ մարմին ունէր՝ որից գլուխը, մէջքն ու պոչը ծածկւած էր գորշագոյն մօրթով, իսկ

վիզը, փորն ու ոտքերը սպիտակ և անքան էլ մաքուր ու փափուկ էր, որ կասէիր թէ յստակ թաւշով է պատած:

Նրա կրօնական գլխի երկու աչիկները՝ ցերեկով նման էին մեր Արշօի աչիկներին, իսկ զիշերով այնպէս փայլում ու հուրհրատին էին սալիս, կասէիր թէ կրակի պէճնր են վառւում: Ապա՞ նրա ականջներն ու բեխերը, թէև «մէկ-մէկու ջգրու» իրարից աւելի էին դուրս ցցւած, բայց դարձեալ գեղեցիկ էին՝ որովհետև մեր Նաղլին էին պատկանում: Մանաւանդ շատ հետաքրքիր էր նրա պոչը. հաւատացէք մի թրուրուան ու կայտառ. մանուկի էր նման: Անդապար շարժում, պատշաճներ անում, աշ ու ձախ թռցնում, վեր ու վար ձգում, բերանով բռնում, կծում, նորից փախցնում, ու մի խօսքով՝ պոչն իրանից լաւն էր ու փոքրիկներին աւելի սիրելի: Իսկ առաիկները, էն կարծ ու բարակ ոտիկներն՝ իրանց սուր-սուր նանկերով, օ՜ օ՜ օ՜, շնա վասնդաւոր էին: Բարկացած ժամանակ այնպէս շանգռում, արիւնքիկ էր անում նրանցով և կամ ձեռքն ընկած որսի միսն այնպէս հուպ էր ապիս, որ՝ էլ աղաւաւելու նար չըկար:

Այս ամէն գեղեցիկութեան հետ, նա մի շնորհք էլ ունէր՝ քէֆին եղած ժամանակ, ո՞ր «հօպ» չէր անում և ցածրից բարձր, վերելից էլ ցած թռչում, կասէիր թէ թաւաւոր թրուչուն է: Անպիտանը լաւն էր, բայց մկների ու փոքրիկ ծաերի սխերիմ թշնամին էր, որի պատճառով մեր երեխաները, հէնց Գրիգոր ապնի ներկայութեամբ, շատ անգամ էին ձեծել նրան:

Նաղլուն զիշերները Գրիգոր տպնի ծոցումն էր բնում, նրան տաքացնելու, իսկ ցերեկները՝ մեծ-մասամբ մանուկների հետ էր: Մէկ էլ տեսար, Անուշը կամ Շամամը՝ փաթաթել են նրան մի շորի կտորի մէջ, գլուխն ու աչքերը միայն բաց թողել և «երեխայ շինած»՝ գրկել են ու հետը դրոյց անում.

- Ի՞նչ ես ուզում բալա շան, ծիծի՞, հա՞, ծիծի՞...
- Ո՞վ ձեծեց քեզ, Պապն՞, թէ Արշօն, ասա՞, լաց մի՛ բլի...
- Ախլի նա՞տօ, արի բրէխին ծիծի տո՛ւ...

Եւ կամ տղերանցից մէկն ու մէկսէլը՝ ձմերուկի «կէպից» սալակ են շինել, կամ մի տախտակակտոր դաել, թոկով Նաղլուի պոչիցը կպաւել են ու բաշ տալ տալիս:


և խոստացան, երբ նա մէկ էլ իրանց ծօռ դաշ՝ մի լաւ ծեծեն:

—Վայ, վայ, վայ, տեսա՞ք խեղճ մուկն ճնց էր ծրվ-ծրվում...

Մանուկներին հանդարտեցնելուց ու բարկութիւններն իջեցնելուց չետո՞յ ժամհար ապին նրանց հասկացրեց թէ, ոնց որ կատին իրանք չարչարում, խաղացնում և ուրախանում են, և այդ ուրախութիւնն իրանց համար բաւականութիւն է, այնպէս էլ Նազըլուի այդ արարքը՝ ճիշտ է, մկան համար մահ է, բայց կատուի համար խաղ է և մեծ բաւականութիւն . .

Երեխաներն ապնի ասածը լսելուց լետոյ, բացականչեցին.

—Պահ օ... կատուն էլ է ուրախանո՞ւմ...



Ս.Ռ.Ս.ՋԻՆՏ, ՓՆՋԻ

Ծանօթութիւն.—Հրատարակելով ներկայ «Մանուկան սրբօձ»-ի առաջին փունջը, մեր ցանկութիւնն է՝ ծանօթացնել հայ մանուկներին գիւղական կեանքում ամբարշտ մանկական զանազան խաղերի, զրոյցների ու սովորութիւնների հետ, որոնք այնքան սիրւած են նրանց հասակակից մանուկների շրջաններում:

Եւ հէնց այդ նպատակով էլ՝ «Հասկեր»-ի լոյս տեսնելու օրերից սկսած, դեռ ևս մի շարք պատմածքներով, նրա փոքրիկ ընթերցողներին ուշադրութեան նիւթ ենք դարձրել՝ գիւղը, նրա մէջ ապրող շարքաշ շինականը, իր զաւակներով և մանաւանդ վերջիններիս նիստն ու կացը:

Ներկայ հաւաքածուն, իրը սկսնակ գրչի արտադրութիւն՝ ի հարկէ, բնականաբար կունենայ և իր պակասաւոր կողմերն, որի համար առաջարկում ենք, թէ մեր պաշտօնակից ընկերների լուրջ ուշադրութեանն և թէ քննադատների անաչառ խօսքին:

Սորին շնորհակալութիւն ենք յայտնում «Հասկեր»-ի խումբագրութեան, որ իր կլիշէյները մեր տրամադրութեան տակ զրեց:

Յ. Ա.



«Ազգային գրադարան»



NL0399628

«Ազգային գրադարան»



NL0399627

«Ազգային գրադարան»



NL0399018

6380-  
-6382

